



ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ  
ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՅԱՆ  
ԶՈՐՈՌՈՇ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ  
ՊԱՏԱՐԱԳ, ՔԱՐՈԶ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՂԹԱՆՔ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 4-ն է, կիրակի: Արարատյան  
դաշտի վրա բացվել է Հայաստանի աշնանա-  
յին ոսկի առավոտը:

Այսօր Վեհափառ Հայրապետի գահակա-  
լության չորրորդ տարեղարձն է: Մայր Աթո-  
ռում տոնական եռուզեռ է: Այս ուրախ առի-  
թով Մայր Տաճարում կմատուցվի Հանդիսա-  
վոր սուրբ պատարագ և կկատարվի Հայրա-  
պետական մաղթանք:

Ժամը 11-ին սկսվում է սուրբ պատարագը:  
Պատարագին է Հոգևոր ճեմարանի վերա-  
տեսուլ գերաշնորհ Տ. Հայկագուն սրբազ-  
նը:

Դասերում տեղ են գրավել պաշտոնական  
անձինք և արտասահմանյան ուժաւավորներ՝  
Քեյրութից՝ տեր և տիկին Ալթունյանները,  
Փարիզից՝ տեր և տիկին Ութունյանները,  
Հնդկաստանից՝ տեր և տիկին Նաճարյաննե-  
րը, Հյուսիսային Ամերիկայից՝ պրոֆ. Մա-  
նասի Սեակը, գերասաններ տեր և տիկին  
Վարդյանները, Ռումինիայից՝ թեմական  
խորհրդի ատենապետ Դանիելյանը, Բուլղա-  
րիայից՝ եկեղեցական խորհրդի ատենապետ  
Կարապետյանը և ուրիշներ:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը եկե-  
ղեցական թափորով առաջնորդվում է Մայր  
Տաճար՝ ամպհովանու ներքո:

Հայրապետական մաղթանքից առաջ քա-  
ռողում է գերաշնորհ Տ. Հայկագուն սրբա-

զանը՝ «Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո  
անշարժ պահեա» բնաբանով:

Քարոզիչ սրբազնը իր գեղեցիկ քարոզի  
մեջ վեր է հանում Հայ Եկեղեցու նախախնա-  
մական դերը Հայ ժողովրդի լուսավորության  
և ազգապահպանման բնագավառում՝ Մայր  
Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, ապա  
շերմ բարեմաղթություններ է կատարում Հայ  
Եկեղեցու պայծառության, Մայր Աթոռի ան-  
սասանության, Հայրենիքի բարգավաճման և  
Վեհափառ Հայրապետի կյանքի արեշատու-  
թյան և քաջառողջության համար:

Տոնական ու ցնծում հնչում են Մայր Ա-  
թոռի զանգերը: Մայր Տաճարում, Էջման Ս-  
Եղանի առաջ, Վեհափառ Հայրապետը, ըր-  
դագատված Մայր Աթոռի ողջ միաբանու-  
թյամբ, եկեղեցական դասով, նախագահում  
է Հայրապետական մաղթանքին: «Օրհնեսցի  
և պահպանեսցի և նախախնամհալ պահեսցի  
արեկենան կողմն աշխարհիս և Հայրապե-  
տութիւն և Հանրապետութիւն Հայոց», — օրհ-  
նում է Վեհափառ Հայրապետը, որին Հայ-  
նակցում է Մայր Տաճարում ներկա ողջ միա-  
բանությունն ու բարեպաշտ ժողովուրդը:

Հայրապետական մաղթանքի վիրշում  
Մայր Տաճարում հնչում է Հայ ժողովրդի  
սրտից բխած շերմ մաղթերգու:

«Երկար կյանք տուր Հայրապետին,  
Երկար օրեր Հայոց Հոր.  
Տե՛ր, անսասան պահիր Դու միշտ  
Քո իսկ հիմնած Մայր Արքու»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ ՇՆՈՐՉԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՎԵՃԱՐԱՆԻ ԾԱՂԿՅԱ ԴԱԶԼԱՑՈՒՄ

Վեճափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Սաղկյա դահլիճ, որտեղ կազմակերպվել էր պաշտոնական ընդունելություն՝ գահակալության շորորորդ տարբերձի առջարձի:

Վեճափառ Հայրապետը բազմում է Հայրապետական Գահի վրա:

Հանուն Մայր Աթոռի միաբանության, առաջինը Վեճափառ Հայրապետին շնորհավորում է գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը.

«Ընորհազարդ Ա. Հայրապետ.

Թուլլ տվյալ Մայր Աթոռի ողջ միաբանության և անձամբ իմ կողմից խորին ակնածությամբ և որդիական շերմ զգացմունքով շնորհավորել Վեճափառությանդ սուրբ օժման շորորորդ տարեղարձը: Ուղիղ շորս տարի առաջ, իշման Ս. Սեղանի առջև, կաթողիկոսական ընտրության պատգամավորները, խղճի կատարյալ գիտակցությամբ, հնամյա Մայր Տաճանի ինկարույթ կամարների տակ, ի մեծ ուրախություն հայ ժողովորդի, ընտրեցին Սրբությանդ Վ. Գրիգոր Լուսավորչի Գահի Գահակալ, որով և վերացավ սգո սև քողը Հայրապետական Գահի վրայից:

Եկեղեցին և Ազգը անկենծ ոգևորությամբ և մեծ հրճվանքով ընդունեցին Զեր ընտրությունը:

Զեր ընտրության մեջ Հայ Ազգը շսխավիեց, ընդհակառակը, մեծագույն իմաստություն ցուցաբերեց, որովհետև Զեր հովանակետության այս շորս տարվա բեղուն աշխատանքները պայծառ կերպով պացուցեցին, որ Դուք Զեր հաստատակամության, արթուն մտքի, պայծառ սրտի և ազնիվ աշխատանքի շնորհիկ եղաք մեծ ու սիրված հայրապետներից մեկը:

Դուք հաղթահարել եք նաև մեծ դժվարություններ ու համարձակորեն առաջ եք ընթանում, սակայն դեռ կան հսկայական կարիքներ ու բազմախի աշխատանքներ: Բայց Դուք, Վեճափառ Տե՛ր, հուսով և հավատով և ամենայն վստահությամբ առաջ եք ընթանում, որովհետև Զեր գործերի մեջ Զեր հետ են հայ ժողովուրդը և հոգմոր դասըլ: Հավատում ենք, որ Վ. Գրիգոր Լուսավորչի հոտը հովվեք և կանուցեք «ի վայրի դալարուց և առ զորս հանգստեան»: Իսկ մենք, Միածնաէց Ս. Սեղանի առջև ծնրադիր, կիսնդրենք երկնավոր Հորից՝ Զեր առողջություն և երկար, բարվոր կյանք:

Զերդ Սրբություն, թուլլ տվյալ կրկին անգամ արտահայտել Զեր մեր լավագույն ցանկությունները, կրկնելով մարգարեի այս խոս-

քորը. «Տէր պահեսցէ զՔեզ յամենայն չարէ, ի թիկնամէց իւր ընկալիցի զՔեզ և ի հովանի թևոց Նորա լուսացիս»: Ամենա:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Մարգիս Գասպարյանը ողջունեց Վեճափառ Հայրապետի գահակալության շորորորդ տարեղարձը, բարձր գնահատանքով ընդգծելով նորին Ս. Օծության հայրենանվեր և խաղաղասիրական փայլուն գործունեությունը:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից խո-սեց պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը, Վեճափառուն հանձնելով հայրապետական ականակուռ մի մատանիկ հատկապես պատրաստված այս առիթով: Ապա խոր հուզումով և երկուղածությամբ խոսեցին կիրանանի հայության անունից պր. Ալթունյանը, Ֆրանսիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Մերովը եպիսկոպոս Մանուկյանի, Գալուպենկյան հիմնարկության նախագահ պր. Ժողե Ազերեղոյ դեր Պերտիգաոյի և պր. Գևորգ Եսայանի անունից պր. Եղվարդ Ութումյանը, Հնդկաստանի համայնքի անունից պր. Խանիկյանը, Ռումինիայի թեմի անունից պր. Դանիկյանը, Բուլղարիայի թեմի անունից պր. Կարդինալ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր Մատեանյանը, հանուն ներքին թեմերի, կարդաց հետեւյալ ճանապարհությունը:

«Վեճափառ Տե՛ր.

Աստուծո՞ ողորմությամբ այսօր նորից Մայր Աթոռում պատեհությունն ենք ունենալու Զեր գահակալության շորորորդ տարեղարձը:

Այս ուրախ առիթով Մայր Հայրենիքի և Սովետական Միության մեր ներքին թեմերի առաջնորդների, հոգևորականության, թեմական և եկեղեցական խորհուրդների և ողջ հավատայալների անունից սրտագին պարտականությունն ունեմ շնորհավորելու Զեր գահակալության շորորորդ տարեղարձը, մաղթելու Զեր քաջառողջություն և արեւու օրեր, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ պայծառություն, Հայ Եկեղեցուն՝ բարգավաճում խաղաղության մեջ, առատության մեջ:

Վեճափառ Տե՛ր, բոլորս լավ հիշում ենք այն օրերը, երբ շորս տարի առաջ, Աղային-եկեղեցական ժողովը ընտրեց Զեր կամոքն Աստուծո՞ պայծառ հովաներ կապելով Զեր անվան և գործունեության հետ:

Դուքություն ամենակալին Աստուծո՞, որ Դուք, Զեր գահակալության անցնող շորս տարիների ընթացքում, իրականացրիք Փետքա դրված համագային հույսերը, որովհետև Զեր հետ են Աստուծո՞ օրհնությունը, Հայ հավատացյալ ժողովրդի սերն ու որ-

դիական հնագանդությունը, հայրենի կառավարության բարյացակամ, անշահախնդիր աշակցությունը, մանավանդ Մայր Աթոռի ողջ միաբանության սրտառուլ համախմբումը Զեր Աթոռի շուրջ:

Արդարու, անցնող չորս տարիները բեղմնավոր եղան վանական-վարչական, շինարարական, կրթական ու կազմակերպչական աշխատանքներով:

Անցնող տարին ևս եղավ արդյունավոր մի տարի: Մայր Աթոռը, ներքին թեմերը անցկացրին խաղաղ գործունեության մի տարի, Զեր անմիջական հսկողությամբ, թելադրությամբ և օգնությամբ:

Անցնող տարում կազմեցիք և հրապարակեցիք եկեղեցական Սահմանադրությունը, ցանկանալով էլ ավելի կազմակերպված տեսնել Հայ եկեղեցին, օրենքի և իրավունքի, պարտքի և պարտականությանց փոխադարձ սկզբունքների հիման վրա:

Անցնող տարում, Զեր անմիջական հսկողության ներքո, կատարվեցին հնագիտական արժեք ներկայացնող պեղումներ Մայր Տաճարում և Ս. Հռիփիսիմեի վանքում, և Զեր Հետեղական աշխատանքների շնորհիվ Մայր Աթոռին վերադարձեցին երեք նշանավոր վանքեր, ինչպիսիք են Տաթև, Հառիճան և Հաղպարծինը:

Վեհափառ Տե՛ր, Զեր գահակալության հրանիկ տարեղարձի առիթով ընդունեցէք ներքին թեմերի որդիական հարգանքն ու հավատարմությունը դեպի Զեր բարձր անձնավորությունը և դեպի մեր Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Թո՛ղ միշտ բարձր մնա «Գաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին»:

Թո՛ղ միշտ բարձրավաճ ու խաղաղ մնա մեր պանծալի Հայրենիքը:

Թո՛ղ միշտ միասնական և անքակտելի մնան Հայ եկեղեցու միությունը, ազգային-եկեղեցական միասնականությունը:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա»: Ամեն:

Ամերիկայի Միացյալ նահանգներից ուժավոր երգուուի տիկին Ս. Վարդյանը հրապումով մհներգեց «Տէր կեցո»-ն:

Ապա խոսք առավ Վեհափառ Հայրապետը.

«Մրելի՛ սրբազն եղբայրներ, մեծահա՛ր պր. Գաւազան, սիրելի՛ ուխտավորներ և հանդիսականներ.

Այսօր անշուշտ ուրախության օր մըն է մեղի համար: Ամեն անզամ, երբ ուրախության պահեր կապրինք այս սուրբ հարկին տակ, ինչ առիթներով ալ ըլլա այդ, բոլոր մեր ուրախությունները, մեր ապրումները և հույզերը վերջ ի վերջ կկապվին այս սուրբ հստատության հետ, Մայր Աթոռ Ս. Էջ-

միածնի հետ: Մենք կկարծենք, թե միշտ և ամեն առիթով Ս. Էջմիածինն է որ կփառավորենք և Ս. Էջմիածին օրինությունն է որ կհայցենք:

Հիենեն եկող շատ իմաստալից խոսեր կան էջմիածնի մասին: Ս. Էջմիածնի գովիք երգու և փառարանող այդ խոսերնեն մեկրուոյ տվել ենիշել: Ուրեմն մեր ենիշերուն կողմեր բաված է. «Վերցրեք Արարատը՝ Հայաստանի փուլ կզա, վերցրեք էջմիածինը՝ Հայաստանյաց նեղեցին փուլ կզա»: Հիենոսէ է այս, նշանաւիս խոսք է այս, մեր ժողովուրդի ղարավոր կյանքի փորձի արդյունք: Մենք կիավատանք այս նշանաւորյան, որովնեան մեր նոգիներով կվկայենք, թե այդ այգան է: Այնպես, ինչպես Վեհափառ Արարատը մեր Հայրենիքի խորհրդանշն է, այնպես ալ Ս. Էջմիածինը մեր լույս հավատի, մեր բոլոր նոգերու զանձերու շահմարտեն է, պահապանն ու ապավենք: Այս խոսքն մեջ կգտնենք իմաստի ուրիշ երանգ մըն այն է հայ ժողովուրդի անայլայլ լավատեսուրյունը: Իրոք, խորունկ լավատեսուրյուն մը կա այդ խոսքին մեջ Ս. Էջմիածնի և Հայաստանի նկատմամբ:

Ի՞նչ կա ավելի հավիտենական բան Արարատը: Ինչ ամ ժամանակ աշխարհը կա, պիտի ըլլա նաև Արարատը: Անա այդ լավատեսուրյունը Մենք կփխադրենք Արարատնեն դեպի մեր Մայր Հայաստան և Ս. Էջմիածնի: Մենք երեք չենք կրեար տկարանալ Մեր լավատեսուրյան մեջ էջմիածնի հավիտականության մեջ էջմիածնի հավիտականությունը կատարենք իսկամայամբ: Մեր մեծ բանաւորդ Ավետիք իսահակյանը նիշտ կերպով բարձր երկու տարի առաջ. «Ինչ ամ ժամանակ Ս. Էջմիածինը կա՝ կլինի նաև նայ ժողովուրդը, ինչ ամ ժամանակ հայ ժողովուրդը կա՝ կլինի նաև Ս. Էջմիածինը»: Այս նըշմարտուրյունը եղան է ու կմնա մեր գյուրյան, մեր ողեկան կյանքի վեմը:

Ուրեմն աղորենք, որ Տերը Մեզ ուժ պարզեւ և իջ մըն ալ ժամանակ, ուղեսզի Մեր սկսած աստվածահան գործը հասցնենք իր փառավոր վախճակին, ի մխիրարարյուն հայ ժողովուրդին, և, ինչո՞ւ չէ, նաև մեր նոգիներուն:

Խորապես հուզված ենք և զգացված այն բալոր բարի մադրաներուն համար, որ ուրախանակ այստեղ հանուն միարանուր իանան, Կերազոյն Հոգերու խորհրդին և հանուն մեր ներմին ու արտասահմանյան բներուն:

Մեր շնորհակալությունը Կյուպենկան հիմնարկության և իր ներկայացուցիչ նարարապետ պր. Եղիշարդ Ուրունենյանին:

Մասնավոր շնորհակալության և երախտագիտարյան խոսք կուղենք ուղղել նաև մեր

նայրենի կառավարության, որում ներկայացուցիչ պր. Գասպարյան իր իմաստալից և ոգեպեղի խոսքերով Մեզ առավել ուրախացուց այսօր: Առաջին անգամ չէ, որ անկանուի այստեղ: Մենք մեր աշխատանքի հանապարհին հանախ կլայելենք անոր ներկայությունը և միշտ կզգանք իր միջոցով հայրենի պետության սերն ու աշակցությունը դեպի այս բազմադարյան սուրբ հաստառությունը և դեպի Մեր անձը:

Մեր գործունեության շրջու տարիներու շշանին շնոր եկեղեցական կարելու նարցեր, որ ներկայացնենք Հայաստանի իշխանության և հոսախար ըլլային: Ընդհակուակր, Մենք միշտ գտանք սպասվածն ապելին: Այս հանդիսավոր պահուն Մենք Մեր երախտազիտուրյունը կիայտնենք հայրենի կառավարության, որու շնորհիլ է միայն, որ Ս. Էջմիածինը իր բոլոր հաստառություններով կվերակառուցվի և կզանա արժանի իր 16-դարյան փառքին: Այս վստահությամբ, բույլ տվել կոչել այս Ս. Արոռնեն՝ կեցցե մեր հայրենի կառավարությունը:

Թողղ Աստված Իր հովանին տարածե մեր բոլորի վրա, պահե, պահպանն Հայաստանայց Առաքելական Ս. Եկեղեցին, մեր Մայր Արքու Ս. Էջմիածինը, մեր մյուս նվիրապետական Արքուները՝ Տաճն Կիլիկին Կարսողիկոսությունը, Երևանականի և Կոստանդնուպոլս Ս. Արքուները իրենց գահակալներու, մեր բոլոր Եպիսկոպոսական և առաջնորդական Արքուները, վաճերեն ու հովվությունները իրենց բոլոր սպասավորներով: Թողղ Տերը պահե, պահպանն մեր համայն հավատացյալ ժառվությունը՝ անսասան իր հավատքի մեջ դեպի Մեր Ս. Էջմիածինը:

Ձեզ ևս, սիրելի՝ միաբաններ և ոխտավորներ, ի Տյառն կիայցենք ուժ և կարողություն և հաջողոջ երկար տարիներ խաղաղությամբ:

«Ովորմութիւն և օրինութիւն ամենակարողին Աստուծոյ եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ»: Ամեն:

Վեհափառ Հայրապետի գահակալության շորորդ տարեգարձը Մաղկյա դահլիճում վերջացավ «Պահպանիշ»-ով:

Ընդունելության պաշտոնական մասի պարագ հետո կատարվեց հյուրասիրություն:

ՀԱՅԿԵՐՈՒՅԹ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԶՈՐՈՐԴ  
ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Գերագույն Հոգևոր Խորհուրդը հոկտեմբերի 4-ին, ժամը 3.30-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում կազմակերպել էր ընդունելություն Վեհափառ Հայրապետի գահակալության շորորդ տարեգարձի առիվիւ:

Ընդունելության ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայեկեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը և Խորհրդի նախագահ տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը:

Պաշտոնական այս ճաշկերութիւն ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերսուուգի Հանձնաժողովը անդամները, Մայր Աթողի միաբանությունը, Սփյուռքից ժամանած ուժատավորները տեր և տիկին Ալթունյանները, տեր և տիկին Նանարյանները, պրոֆ. Մանաս Սևակը, գերասանները տեր և տիկին Վարդյանները, պր. Դանիելյանը և պր. Կարապետյանը: Երևանից ժամանած Հյուրերի թվումն էին Մարտիրոս Սարյանը, դիրիժոր Օհան Դուրյանը, պրոֆ. Մետնիկյանը, պրոֆ. Կ. Ղաֆարյանը, ճարտարապետներ Մ. Մազմանյանը, Ի. Խորյանյանը, Վարազդատ Հարությունյանը, Կոթիկ Հովհաննիսյանը, Բաղդիկ Արզումանյանը, ինժեներ Ա. Մատինյանը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնելությունը, Մայր Տաճարի երգչախմբի ներկայացուցիչներ և այլ հրավիրյաններ:

Վեհափառ Հայրապետի աղոթքով բացվում է ճաշկերութիւն սեղանը: Տոնական ուրախ ու հայրենասիրական իսանդավառ մթնոլորտ է ստեղծվում անմիջապես սեղանների շորջ:

Վեհափառ Հայրապետը առաջին բաժակը առաջարկում է Ս. Էջմիածնի պայծառության և անսասանության և Հայ Եկեղեցու կենացը: Բոլորը ստքի են կանգնել: Մայր Աթողի սարկավագները երգում են «Էջմիածինն ի Հօրէ» շարականը: Ա լսարանի ուսանող Կարպիս Սերայտարյանը ապրումով արտասանում է Հովհաննիսյանի «Էջմիածին»-ը:

Վեհափառ Հայրապետը առաջարկում է երկրորդ բաժակը Մայր Հայրենիքի և Հայրենի կառավարության կենացը: Բոլոր ներկաները հոտնկայ ունկնդրում են Հայկական ՍՍՌ Պետական Հիմնը (նվագ), որից հետո դահլիճում թնդում է «Հայաստան», երկիր դրախտավայր»-ը՝ Ծնիկ Օղարաշյանի կատարումով: Ապա Գ լսարանի ուսանող բարեշնորհ Սարգիս սարկավագ Սարգսյանը զերմ շնչով արտասանում է Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»-ն:

Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Մահակ արքեպիսկոպոսը երրորդ բաժակը առաջարկում է Վեհափառ Հայրապետի կենացը, որը խմլում է հոտնկայ, մինչ սարկավագների խումբը երգում է Հայրապետական մաղթերգ՝ «Ամեն հայի սրտից բիած»:

Վեհափառ Հայրապետի գահակալության շորորդ տարեգարձի այս ուրախ առիթով ներկաներից շատերը շնորհավորության, բա-

րեմաղթության սրտագին խոսքեր են ասում  
եկեղեցասիրական, Հայրենասիրական վառ  
արտահայտություններով:

Առանձնապես շատ ջերմ են հնչում Սահակ  
արքեպիսկոպոսի, պրոֆ. Մանասի Սևակի,  
պրոֆ. Մետնիկյանի, Ա. Տիրացյանի, Մ.  
Մազմանյանի, Նաճարյանի ելույթները:

Քնունելության ժամանակ գործադրվեց  
նաև գեղարվեստական ճոխ մի հայտագիր՝  
բաղկացած խմբերգներից, մեներգներից և  
արտասանություններից: Մայր Աթոռի սար-  
կավագների երգչախումբը հաջողությամբ  
կատարեց մի շարք խմբերգներ, ինչպես՝  
«Ուրախ լեռ», «Որք զարդարեցին», «Միոնի  
որդիք» շարականները, ինչպես նաև ժողո-  
վըրդական խմբերգներ՝ «Ալագյազ», «Մե-  
դանն է առատ», «Միրուն երևան» և այլն:  
Գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազնը իր «Եր-  
բոր բացվին դռներն հուսո» մեներգով թունդ  
հանեց սրտերը:

Բարեշնորհ Խորեն, Պետրոս և Հակոբ սար-  
կավագները և ուրարակիր Խորեն Հակոբյանը  
իրենց մեներգներով և նվագով գեղարվես-  
տական վայելք պատճառեցին բոլոր ներկա-  
ներին:

Գեղարվեստական բաժնին իրենց մասնակ-  
ցությունը բերին նաև Մայր Տաճարի երգա-  
խմբի մեներգիչներ ժողեփինա Սեբակեանը,  
Ավետարանա Զաքարյանը, Քնարիկ Օհանյանը,  
Օննիկ Թերզյանը, Օննիկ Օդարաշյանը և Հա-  
կոբ Թիմուրյանը:

Քնունելության փայլը իրենց արտասա-  
նություններով ավելացրին բարեշնորհ Մանդ-  
րո սարկավագ Բեհբությանը («Երևան») և Գ  
դասարանի ուսանող Հովհաննես Գաղանձյա-  
նը (Վարուժանի «Կարոտի նամակ»),

Քնունելության ժամանակ Վեհափառ Հայ-  
րապետը բաժակ առաջարկեց վարպետի՝  
ՍՍԴՌ ժողովրդական նկարիչ Մարտիրոս  
Մարյանի, ինչպես նաև Հայրենիքի գիտնա-  
կանների, արվեստագետների, ճարտարա-  
պետների կենացը, որոնց ներկայացուցիչնե-  
րը գտնվում էին սեղանի շուրջ:

Վերջում, ծափահարությունների տակ խոսք  
առավ Վեհափառ Հայրապետը.

«Հարցելի՞ սեղանակիցներ,

Այսօր Մեր համեստ անձի շուրջը դուք հա-  
վաված, քե՛ եկեղեցվո և քե՛ Մաղկյա դահ-  
լինին մեզ, հոգեւոր ուրախության պահեր ապ-  
րեցանք:

Այս սեղանին շուրջ, Մենք անգամ մը ևս  
կուզենք շնորհակալուրյուն հայտնել ձեր  
շերմ խոմիներուն համար: Մեր իղձն ու Մեր  
որշումն է՝ նոր ենադով շարունակի Մեր  
սկսած սուրբ զործը և հոյս ունինք, որ մեր  
հայրենի կառավարության օճանդակուրյամբ  
և մեր հավատացյալ ժողովուրդի բարոյական  
և նյուրական աշակցությամբ և Մեր ուժերով  
պիտի կարենանք հաջողի իրազործելու Մեր  
ծրագրիները:

Այսաւել արծարձվեցան մտեր արտասահ-  
մանի մեջ կատարվող եկեղեցական պառակ-  
տումի փորձերու առնչությամբ: Մենք, ի-  
հարկե, տեղյակ ենք այս բոլորին և կինտե-  
վինք օրբ-օրին, նիշտ այնպես, ինչպես  
բժիշկը մտահոգ՝ կինտեկի հիվանդի բազկե-  
րակին:

Միրելի՝ հայրենակիցներ, դո՛ւ, որ արտա-  
սահմանեն կուզա, կրեաք ձեր վերաղարձին  
վստահեցնել բոլորին, մանավանդ բոլոր  
անոնց, որոնք բյուր կարծիք ունին Մեր վրա,  
թէ սիալ և եկեղեցահանդ է բաժանումներու  
և հերձումներու նախապարհը: Եկեղեցվո և  
Ազգի շաբը կապահեց միություն, ներքին  
խաղաղություն և շինարար գործակցություն: Հաղորդեցին անոնց Մեր սիրո ողջունները  
և բանք, թէ Մեզի համար էշմիածնեն ոչ մեկ  
հայ բաժնված չէ, Մենք բոլոր կենաւենք  
Ս. էշմիածնի զավակները և կապասենք ա-  
նոնց դարձին և կմադրենք, որ իրոք օր մը  
հաստատի մեր եկեղեցվո մեջ սիրո միու-  
թյունը, և մենք բոլոր միասին այսուղ՝  
Փրկչի իջման Ս. Սեղանին առաջ ծունկի ե-  
կած, աղորենք և վերանորոգենք մեր ուստր:

Այս հոյզերով, Մենք անգամ մը ևս շնոր-  
հակալուրյուն կիայտնենք բոլորիդ՝ տալով  
Մեր հայրապետական օրհնությունը:

Սակայն և խաղաղություն ընդ ձեզ: Ամեն:

Խմբավին երգված Տերունական աղոթքից  
հետո ընդունելությունը վերջացավ Վեհափառ  
Հայրապետի «Պահպանիլ»-ով:

